

## ԿԱՐԾԻՔ

Հակոբ Մուշեղի Գևորգյանի «Զինված ուժերում ծառայողական գործունեության արդյունավետության գնահատման սոցիալ-հոգեբանական մեխանիզմները (ՀՀ ԶՈՒ կրտսեր սպայական կազմի օրինակով)» վերնագրով  
ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն»  
մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեման հետաքրքրիր է և ակտուալ, ունի կիրառական մեծ նշանակություն: Այսօր ժամանակի հրամայական են դարձել այնպիսի հարցադրումներ, ինչպիսիք են զինված ուժերում մարտունակության պահպանումը և դրա մակարդակի շարունակական բարձրացումը: Այդ տեսանկյունից խիստ կարևորվում են զինված ուժերում ծառայողական գործունեության արդյունավետության գնահատման հոգեբանական մեխանիզմների բացահայտումն ու ներդրումը, ինչը նպաստելու է զինված ուժերում մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը: Այս խնդրների ուսումնասիրումը ոչ միայն հիրավի կարևոր է, այլև հրատապ և արդիական, հատկապես՝ հայաստանյան այս բարդ ռազմաքաղաքական իրողությունների պայմաններում: Ինչպես իրավացիորեն նշում է նաև հեղինակը, զինծառայողների գործունեության արդյունավետությունն ապահովող չափանիշների և գործունեության արդյունավետության որակի որոշումը հնարավոր կլիներ զինված ուժերում ծառայողական գործունեության արդյունավետության սոցիալ-հոգեբանական գործոնների բացահայտման, արդյունավետության գնահատման մեխանիզմների մշակման և ներդրման միասնական մուտեցման շնորհիվ, որին և սույն ուսումնասիրությունը:

Ատենախոսության ներածությունը ճիշտ է կառուցված և հստակ պատկերացում է տալիս հետազոտության տրամաբանության, մեթոդների, ընտրակազմի վերաբերյալ: Ներածական մասում ներկայացված է նաև ուսումնասիրվող հիմնախնդիրը, դրա

տեսական և գործնական նշանակությունը, հստակ ձևակերպված է վարկածը, հիմնական նպատակը, խնդիրները, գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող դրույթները: Ատենախոսության երեք զլուխները կազմում են միմյանց հաջորդող և լրացնող տրամաբանական ամբողջություն: Իրականացվել է ծառայողական գործունեության արդյունավետության որոշակի մակարդակների ձևավորման հիմքում ընկած անհատական և անձնային հատկությունների, անձնային կառույցների հետազոտության արդյունքների համահարաբերակցային ցուցանիշների հոգեբանական վերլուծությունը, որը հաստատում է առաջարկված տեսական խնդիրները և փաստում է այն, որ ատենախոսության հեղինակին հաջողվել է ամբողջական վերլուծության ենթարկել ուսումնասիրվող թեման՝ հիմնավորելով առաջ քաշված վարկածը: Ատենախոսության առաջին և երկրորդ զլուխներում մանրամասն վերլուծված է թեմային առնչվող գրականությունը:

Ատենախոսության առաջին զլուսմ հեղինակը ներկայացնում է անձի մասնագիտական և աշխատանքային գործունեության հիմնախնդիրները: Անդրադարձ է կատարել գործունեության հիմնախնդրի զարգացման մեջ մեծ ներդրում ունեցող մի շարք հեղինակների աշխատանքների /Կ. Ա. Աբովյանովա-Սլավոկայա, Բ. Գ. Անանև, Վ. Վ. Դավիթովա, Ե. Ա. Կյամով, Բ. Ֆ. Լոմով, Վ. Դ. Շաղրիկովա, Ա. Ն. Լեռնտև, Ս. Լ. Ռուբինշտեյն և Ա. Բ. Բոուշլինսկի, Լ. Ս. Վիգոսովի/:

Ատենախոսության երկրորդ զլուսմ հեղինակը անդրադարձ է կատարում ծառայողական գործունեության բնութագրին և ծառայողական գործունեության արդյունավետությունը պայմանավորող գործոններին, ինչպես նաև զինվորական գործունեության արդյունավետության համատեքստում զինվորական ծառայության անվտանգության ապահովման համակարգին, որի հիմքում ֆունդամենտալ առումով, հանգամանալից հետազոտվել և ներկայացվել են հոգեբանական, տեղեկատվական և ֆիզիկական անվտանգության բաղադրիչները:

Ատենախոսության երրորդ զլուսմ հեղինակը ներկայացնում է հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմքերը և մեթոդները, ինչպես նաև հետազոտության արդյունքները և դրանց վերլուծությունը: Ատենախոսը տիրապետում և արդյունավետորեն կիրառում է հետազոտական մեթոդիկաների համախումբը՝ ելնելով համակարգային

մոտեցման շրջանակներից: Հետազոտության ընթացքում օգտագործված մեթոդների և մեթոդիկաների ընտրությունը համահունչ է ուսումնասիրության առարկային, ինչպես նաև համարժեք՝ ուսումնասիրության խնդիրներին:

Աշխատանքի մեջ, որպես գիտական ուսումնասիրության առարկա հեղինակն առաջին անգամ սահմանել է ծառայողական գործունեության արդյունավետության գնահատման գործուն մեխանիզմներ՝ որոշակի չափանիշներով և մեթոդաբանական գործիքակազմով. Ուստի կարևոր է շեշտադրել, որ գիտական համարձակություն էր պետք վերոնշյալ գիտական խնդիրը ռազմաքաղաքական ոլորտի օրակարգ բերելու համար, որն էլ հաջողվել է:

Հետազոտությունն իրականացվել և ներկայացվել է ընդհանուր առմամբ պատշաճ մակարդակով: Մանրամասն ներկայացված է հետազոտության կազմակերպումը, ընթացքը, կիրառած մեթոդները՝ դրանց ընտրության նպատակահարմարության հիմնավորումամբ:

Ատենախոսությունն ավարտվում է եզրակացություններով, որոնք արտացոլում են հետազոտության արդյունքները:

Ատենախոսության շարադրման լեզուն և ոճը լիովին համապատասխանում են ռազմական հոգեբանության գիտական տերմինաբանությանը և տրամաբանությանը:

Ամփոփելով, կարելի է ասել, որ կատարվել է ծավալուն, հետաքրքիր հետազոտություն, որն անշուշտ կհարստացնի ռազմական հոգեբանության կիրառական ոլորտը: Միևնույն ժամանակ, աշխատանքում՝ առկա են որոշ թերություններ.

1. Ինչպես ներկայացված է աշխատանքում ատենախոսը սահմանել է ծառայողական գործունեության արդյունավետության գնահատման չափորոշիչ: Կարծում եմ այդ չափորոշիչները ներկայացված են խիստ սուրբեկտիվորեն. Արդյո՞ք բավարար է նախորոշված չափորոշիչների քանակական և որակական բնույթը ծառայողական գործունեության արդյունավետության գնահատման որևէ մակարդակի («Բարձր արդյունավետություն», «Միջին արդյունավետություն», «Ցածր արդյունավետություն») ձևավորման պարագայում:

2. Համաձայն ատենախոսության 4-րդ խնդրի, ատենախոսը անրադարձել է կրտսեր սպայական կազմի ծառայողական գործունեության արդյունավետությունը

պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոններին: Ինչպես կիմնավորեք Ձեր աշխատանքի մտահղացումը, այն առումով, որ հատկապես կարևորել էք ընդամենը հոգեբանական, տեղեկատվական և ֆիզիկական անվտանգության հարցերը և արդյո՞ք հենց այս գործոնների ազդեցությունն է առավել փոխայմանավորված զինծառայողների մարտական պատրաստվածության և բարոյահոգեբանական վիճակի որոշակի մակարդակի հետ:

3. Բացի հոգեբանական գիտության մեջ բավականաշափ հայտնի և կիրառված մեթոդիկաների մարտկոցի, ատենախոսը կիրառել է նաև իր կողմից կազմած 2 հարցարաններ: Արդյո՞ք օրյեկտիվ չափորոշիչների հիման վրա են կազմած այդ հարցարաններն ու հարցերի տրամաբանությունը և որքանո՞վ են բացահայտում ուսումնասիրվող խնդիրը և ի վերջո որքանո՞վ են հավաստի այդ հարցարաններից ստացված արդյունքները:

4. Համաձայն «Մարտական հերթապահություն չիրականացնող գորամասերի սպաների հետազոտական արդյունքների կորելացիոն պլեադայի» տվյալների առավել ամուր փոխկապվածություն կա համառության և հաջողության հասնելու մակարդակի միջև, ուղիղ փոխկապվածություն կա «Համառության և հաստատակամության» միջև, այս ցուցանիշն է նաև «Համառության և կոնֆլիկտայնության» մակարդակների դրսնորման դեպքում: Առավել ամուր փոխկապվածություն է դրսնորվել նաև «Ապրումակցման և ընդհանուր հուզականության» միջև և հակադարձ փոխկապվածություն է դրսնորվել «համառության և զրգուման» միջև, կցանկանայինք մանրամասնել, թե ինչով է բացատրվում այդ փոխկապակցվածությունները:

5. Աշխատանքը գերծ չէ նաև տեխնիկական թերություններից, գրականության ցանկում նշված են հեղինակներ, ոնոնց աշխատանքները բացակայում են ատենախոսության մեջ, կան աշխատանքներ, որոնց մասին խոսվում են ատենախոսության մեջ, բայց դրանք բացակայում են գրականության ցանկում:

Նշված թերություններն, անշուշտ, չեն ազդում ատենախոսության գիտական որակի վրա, ատենախոսությունը ամրողական, ավարտուն, գիտական նորույթ պարունակող հետազոտություն է: Այն իր բովանդակությամբ և ձևակերպումներով համապատասխանում է ԲՌԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ

կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Հակոբ Մուշեղի Գևորգյանն արժանի է հոգեբանական զիտությունների թեկնածուի զիտական աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն մասնագիտությամբ:

Պաշտոնական  
բնդիմախուն՝

W. Whipple and

հոգեբանական գիտությունների դոկտոր,

Հայոց Ազգական Առաջնախաղը

Ա. Ա. Սեղրակյանի ստորագրությունը հաստատում եմ՝  
զիստ. քարտուղար՝

բժ. զիս. դոկտ. *J. Ruzgusyan* Ժ. Ռուզգյան

